

## ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Մարդասիրական միջամտության իրականացման իրավական հիմքերը և կիրառման խնդիրները

ԼԻԼԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևանի Վ. Բրուտովի անվան պետական լեզվահասարակագիտական  
համալսարան

ՄԱԿ կանոնադրությամբ ամրագրված մարդու իրավունքների հարգման, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների ներքին իրավասությանն առնչվող հարցերին չմիջամտելու և պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքներին զուգահեռ միջազգային իրավունքում լայն կիրառում ունի նաև ակտիվ բանավեճերի ու քննարկումների թեմա դարձած «մարդասիրական միջամտություն» հասկացությունը: Ժամանակի ընթացքում հասկացության շուրջ ծավալված քննարկումներն ու անհամաձայնությունները պայմաններ ստեղծեցին միջազգային հարաբերություններում նոր՝ «պաշտպանելու պատասխանատվություն» սկզբունքի ձևավորման համար: Նոր մոտեցմամբ պետության ինքնիշխանությունը դադարեց ընկալվել որպես արտոնություն: Այն առաջին հերթին սկսեց մեկնարանվել որպես պետության պատասխանատվություն, որի ձախողման դեպքում միայն միջազգային հանրությունն իրավասու է իրականացնել պաշտպանելու պատասխանատվությունը: Նոր հասկացությամբ հնի փոխարինումը, սակայն, չկարողացավ շրջանցել միջազգային պրակտիկայում սկզբունքի իրականացման լեզվատիրության, դրա կիրառման խնդիրների շուրջ մոտեցումների տարբերություններն ու տարաձայնությունները: Հոդվածում դիտարկվում են միջազգային հարաբերություններում մարդասիրական միջամտության, պաշտպանելու պատասխանատվության իրականացման իրավական հիմքերն ու կիրառման խնդիրները, ՄԱԿ-ի Պետական ինքնիշխանության և միջամտության հարցերով միջազգային հանձնաժողովի կողմից պաշտպանելու պատասխանատվության իրականացման համար առաջ քաշված սկզբունքները, դրանց առանձնահատկություններն ու թերությունները:

### Բանալի բառեր

Մարդու իրավունքներ, մարդասիրական միջամտություն, պետության ինքնիշխանություն, պաշտպանելու պատասխանատվություն, պետական շահեր, , լեզվատիրություն

## Նախաբան

Երկու համաշխարհային պատերազմներից հետո, երբ միջազգային հանրությունն արդեն իսկ ակնատես էր եղել մարդու իրավունքների զանգվածային ոտնահարման մի շարք դեպքերի, մասնավորապես՝ հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությանը, հրեաների հոլոքոստին և այլն, օրակարգային հարց էր դարձել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար իրավական հիմքեր ստեղծելու անհրաժեշտությունը: Խնդրի լուծումը միջպետական հարաբերություններ տեղափոխել հնարարավոր եղավ ՄԱԿ-ի ստեղծումից հետո միայն, երբ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից առանցքային նշանակություն ձեռք բերեց ՄԱԿ-ի կանոնադրությունը<sup>1</sup>, որում արձանագրված նպատակների շարքում առանձնանում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը (հոդվածներ 1 (3), 55, 56), մասնավորապես, նպատակ ունենալով իրականացնել միջազգային համագործակցություն՝ մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքի տարածման և խրախուսման գործում՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ դավանանքից: ՄԱԿ-ի կանոնադրությունից բացի մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առանցքային նշանակություն ունեն նաև Մարդու իրավունքների միջազգային բիլլը, ինչպես նաև ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և այլ միջազգային կազմակերպությունների ընդունած և պարտադիր իրավաբանական ուժ ունեցող մի շարք փաստաթղթեր: Այնուամենայնիվ, անկախ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում իրավական հիմքերի առկայությանից, մարդու իրավունքների կոպիտ խախտումները, մարդկության նկատմամբ իրականացվող վայրագություններն ու բռնություններն առ այսօր շարունակական բնույթ ունեն, ինչով պայմանավորված էլ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում «մարդասիրական միջամտություն» հասկացության իրավական հիմքերի, կիրառման խնդիրների, այդ գործընթացի քաղաքական բաղադրիչի, պետության ինքնիշխանության վրա նմանատիպ

<sup>1</sup> ՄԱԿ-ի կանոնադրություն,  
[http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter\\_arm.pdf](http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter_arm.pdf)

միջամտության հնարավոր ազդեցության ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

### Մարդասիրական միջամտություն

«Մարդասիրական միջամտություն» հասկացության, դրա իրավական հիմքերի առկայության շուրջ քննարկումները մշտապես եղել են ակտիվ բանավեճերի թեմա: Չնայած գոյություն ունեցող սահմանումների բազմազանությանը, դրանց բոլորի հիմքում ընկած է մարդու իրավունքների պաշտպանության նպատակով իրականացվող ռազմական միջամտությունը՝ առանց թիրախային պետության համաձայնության: Թեև պետք է նշել նաև, որ մարդասիրական միջամտությունը չի ենթադրում ռազմական ուժի պարտադիր կիրառում, քանզի միջազգային փորձում կիրառելի է նաև պատժամիջոցների իրականացումն ու մարդասիրական օգնության ցուցաբերումը: Ինչպես սահմանում է Շ. Սրֆին՝ այն առանձին պետության, պետությունների խմբի կամ միջազգային կազմակերպության կողմից ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումն է, որը միտված է պաշտպանելու մարդու՝ միջազգայնորեն ճանաչված իրավունքները թիրախային երկրում<sup>2</sup>, այլ կերպ ասած՝ մարդասիրական միջամտության հռչակված նպատակը թիրախային պետության քաղաքացիների պաշտպանությունն է իրենց հիմնական իրավունքների կոպիտ խախտումներից, որոնք սովորաբար իրականացնում է այդ պետությունը<sup>3</sup>: Մեկ այլ մոտեցման համաձայն, մարդասիրական միջամտությունը մարդասիրական աղետի կանխարգելման նպատակով միջազգային հանրության՝ ռազմական գործողության կիրառմամբ միջամտությունն է իրենց ինքնիշխանությունը չարաշահող մեկ կամ մի քանի պետությունների ներքին գործերին<sup>4</sup>: Սահմանումների ամփոփ-

<sup>2</sup> **Murphy S.**, Humanitarian Intervention: The United Nations in an Evolving World Order, Philadelphia, 1996, pp. 11-12.

<sup>3</sup> **Ayoob M.**, Humanitarian Intervention and State Sovereignty, *The International Journal of Human Rights*, 6, 1, 2002, 81-102.

<sup>4</sup> **Худайкулова А.**, Новое в управлении международными конфликтами, опосредованные войны вместо гуманитарных интервенций?, *Международные*

մամբ մարդասիրական միջամտությունը կարելի է ներկայացնել որպես թիրախային երկրի քաղաքացիների՝ միջազգայնորեն ճանաչված մարդու հիմնարար իրավունքների խախտման դեպքում միջազգային հանրության անհրաժեշտ գործողությունների իրականացում, որը կարող է արտահայտվել ինչպես մարդասիրական օգնության կամ պատժամիջոցների կիրառման, այնպես էլ ռազմական միջամտության ձևով:

Գլոբալացման ազդեցությամբ աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները հանգեցրել են «մարդասիրական միջամտություն» հասկացության և դրա իրականացման արդարացման ընդլայնված մեկնաբանությունների ոչ միայն մարդու իրավունքների խախտման դեպքում, այլև բռնապետական վարչակարգի վերացման, ահաբեկչության զսպման, միջուկային, քիմիական և կենսաբանական զենքի վերացման նպատակով<sup>5</sup>: Այս դեպքում իրականացվող մարդասիրական միջամտությունն ուղղված է միջազգային անվտանգության ապահովմանն ու ամրապնդմանը: Իսկ դրան հնարավոր է հասնել միջազգային համագործակցության պայմաններում, և ոչ՝ բացառապես ազգային քաղաքականությամբ:

Մարդասիրական միջամտության իրականացման իրավական հիմքերի շուրջ բանավեճերի հիմքում ՄԱԿ կանոնադրությամբ ամրագրված այլ պետությունների ներքին իրավասության հարցերին չմիջամտելու սկզբունքի և մարդասիրական միջամտությամբ իրականացվող գործողությունների միջև առկա հակասությունն է: Գոյություն ունի տեսակետ<sup>6</sup>, որի համաձայն մարդու իրավունքների պաշտպանության նպատակով պետության ներքին գործերին միջամտությունը հիմնավորվում է նրանով, որ մարդու իրավունքների համընդհանուր հարգումը գլխավոր սկզբունքներից մեկն է, որով առաջնորդվում է ՄԱԿ-ը: Այս առումով մարդու իրավունքների և հիմնական ազատու-

*процессы*, 14, 4(47), 2016, 67-79,

<http://intertrends.ru/system/Doc/ArticlePdf/1728/Kdw8Mj8GHP.pdf> (15.03.2018).

<sup>5</sup> **Карташкин В.**, Права человека: международная защита в условиях глобализации, Москва, 2009, с. 225.

<sup>6</sup> **Йо Никэз А.**, Международно-правовое основание вмешательства во внутренние дела государства по вопросам, относящимся к защите прав человека, *Евразийский юридический журнал*, 3 (70), 2014, 50-52.

թյունների ամեն մի կոպիտ և զանգվածային խախտում հիմք է հանդիսանում ցանկացած պետության ներքին գործերին միջազգային միջամտության համար: Առաջին հայացքից հիմնավոր թվացող մեկնաբանությունը, սակայն, լիարժեք չի ներկայացնում այն, ինչ իրականում գոյություն ունի երևույթի հակառակ կողմում: Խնդիրն այն է, որ, ինչպես պատմական փորձը բազմիցս ցույց է տվել, մարդասիրական միջամտության իրականացման շարժառիթը կամ նպատակը մշտապես չէ, որ որևէ պետության քաղաքացիներին իրենց հիմնական իրավունքների ոտնահարումից պաշտպանելն է: Մասնավորապես, շատ հաճախ այն միջամտությունն իրականացնող պետության կամ պետությունների խմբերի շահերով պայմանավորված գործողություն է, երբ մարդու իրավունքների պաշտպանությունն օգտագործվում է որպես քող՝ սեփական շահերին հասնելու ճանապարհին օրինականացնելու համար:

### **Նոր հասկացություն միջազգային հարաբերություններում**

Մարդասիրական միջամտության իրականացման իրավական հիմքերի առկայության շուրջ քննարկումներն էլ ավելի թեժացան 1999 թվականին Կոստվոյու<sup>7</sup> ՆԱՏՕ-ի իրականացրած գործողությունից հետո, ինչն էլ, ի վերջո, հանգեցրեց հասկացության վերանայմանն ու միջազգային հարաբերություններում նոր՝ «պաշտպանելու պատասխանատվություն» (Responsibility to Protect (R2P)) եզրույթի ներմուծմանը:

Պետական ինքնիշխանության և միջամտության հարցերով միջազգային հանձնաժողովի (ՊԻՄՄՀ) զեկույցի համաձայն մարդկանց պաշտպանության հիմքեր ունեցող միջամտության որևէ նոր մոտեցում պետք է ունենա առնվազն 4 հիմնական նպատակ<sup>8</sup>.

<sup>7</sup> Security Council Resolution № 1244, 1999, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf?OpenElement> (18.03.2018).

<sup>8</sup> The Responsibility to Protect, Report of the International Commission on Intervention and State Sovereignty(ICISS), Ottawa, 2001, p.11, <http://responsibilitytoprotect.org/ICISS%20Report.pdf> (15.03.2018).

- ստեղծել հստակ կանոններ, ընթացակարգեր և չափանիշներ՝ որոշելու համար մարդասիրական միջամտության իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև երբ և ինչպես այն իրականացնել,
- օրինականացնել ռազմական միջամտությունը՝ երբ անհրաժեշտ է, և երբ բոլոր մյուս մոտեցումները ձախողվել են,
- երաշխավորել, որ ռազմական միջամտությունը, երբ այն տեղի է ունենում է, իրականացվում է միայն ներկայացված նպատակներով, արդյունավետ է և իրականացվում է մարդկային կորուստների և ինստիտուցիոնալ վնասների նվազեցման նպատակով,
- աջակցել հակամարտության պատճառների վերացմանը՝ միաժամանակ ավելացնելով երկարատև և կայուն խաղաղության հեռանկարները:

«Մարդասիրական միջամտություն» հասկացությունը «պաշտպանելու պատասխանատվություն» հասկացությամբ փոխարինելու գաղափարը Գարեթ Էվանսին էր: Նա համարում էր, որ նոր հասկացության ներդրումն ունի առնվազն երեք առավելություն<sup>9</sup>.

- այն ենթադրում է խնդիրների գնահատումը աջակցության կարիքն ունեցողների, և ոչ թե նրանց տեսանկյունից, ովքեր կարող են դիտարկել միջամտությունն իրականացնելու հնարավորությունը: Շեշտը դրված է համայնքներին՝ զանգվածային սպանություններից, կանանց՝ մշտական սեռական բռնությունից, երեխաներին՝ սովից պաշտպանելու վրա,
- առաջնային պատասխանատվությունն ընկած է թիրախային պետության վրա. միայն այն դեպքում, երբ պետությունն ի վիճակի չէ կամ չի ցանկանում կատարել պաշտպանելու իր պատասխանատվությունը, կամ հենց ինքն է հանցագործը, ,, միջազգային հանրությունը գործելու պատասխանատվությունը պետք է վերցնի իր վրա,
- «պաշտպանելու պատասխանատվությունը» հասկացություն է, որն ընդգրկում է ոչ միայն «արձագանքելու», այլ նաև

<sup>9</sup> Evans G., Sahnoun M., Responsibility to Protect, *Foreign Affairs*, 81, 6, 2002, 99-110.

«կանխարգելելու» և «վերակառուցելու պատասխանատվությունը»: Այս երկու չափումները շատ անտեսված էին ավանդական մարդասիրական միջամտության բանավեճում:

Նոր հասկացությամբ պետության ինքնիշխանությունն այլևս դադարեց մեկնաբանվել նախկինում հայտնի մոտեցումներով: Ինչպես նշում է սկզբունքի հեղինակը՝ ինքնիշխանությունը ենթադրում է երկակի պատասխանատվություն. արտաքին՝ հարգել այլ պետությունների ինքնիշխանությունը, և ներքին՝ հարգել պետության տարածքում բոլոր մարդկանց արժանապատվությունը և հիմնական իրավունքները<sup>10</sup>: Այնտեղ, որտեղ ներքին պատերազմի, ապստամբության, ճնշման կամ պետության ձախողման հետևանքով բնակչությունը կրում է լուրջ վնաս և այդ պետությունը չի ցանկանում կամ ի գործու չէ դադարեցնել կամ կանխարգելել այն, չմիջամտելու սկզբունքն իր տեղը զիջում է պաշտպանելու պատասխանատվությանը<sup>11</sup>: Այսպիսով՝ նոր հասկացությունը նշանակալի էր պետության ինքնիշխանության և մարդասիրական միջամտության իրականացման միջև հակասությունները հաղթահարելու տեսանկյունից, քանզի սկզբունքի ձևավորմանը զուգահեռ պետության ինքնիշխանությունը դադարեց սահմանվել որպես արտոնություն: 2005թ. ՄԱԿ համաշխարհային գագաթաժողովին Գլխավոր Ասամբլեայի եզրափակիչ փաստաթղթով<sup>12</sup> պետությունների ղեկավարներն ու կառավարություններն ընդունեցին «պաշտպանելու պատասխանատվություն» սկզբունքը, որի հիմքում ընկած են.

1. պետությունների հիմնական պատասխանատվությունը՝ համապատասխան և անհրաժեշտ միջոցներով պաշտպանել սեփական բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումից և մարդկության դեմ կատարվող այլ հանցագործություններից,
2. միջազգային հանրության պատասխանատվությունը՝ խրախուսել և աջակցել պետություններին՝ իրականացնելու այդ պատասխանատվությունը,

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ XI.

<sup>12</sup> 2005 World Summit Outcome, Doc. A/RES/60/1, UN General Assembly, [http://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A\\_RES\\_60\\_1.pdf](http://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_60_1.pdf) (15.03.2018).

3. ՄԱԿ կանոնադրության համաձայն, միջազգային հանրության պատասխանատվությունը՝ իրականացնել դիվանագիտական, մարդասիրական և այլ խաղաղ միջոցներ՝ բնակչությանը վերը նշված հանցանքներից պաշտպանելու համար այն դեպքում, երբ խաղաղ միջոցները բավարար չեն, իսկ պետությունն ակնհայտորեն ձախողել է սեփական բնակչության պաշտպանությունը վերոհիշյալ չորս հանցագործություններից:

2009 թվականին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունն իր՝ «Պաշտպանելու պատասխանատվության իրականացում» թեմայով զեկույցում<sup>13</sup> պարզաբանեց 2005 թվականի համաձայնագրի բնույթը և առաջ քաշեց միջոցներ, որոնց հիման վրա ՄԱԿ-ը, առանձին պետություններ, տարածաշրջանային կազմակերպություններ պետք է իրականացնեն պաշտպանելու պատասխանատվության վերոհիշյալ երեք ֆունկցիաները:

### **Պաշտպանելու պատասխանատվության կիրառման հնարավորություններն ու խնդիրները ՊԻՄՄՆ սկզբունքների շրջանակում**

Դեռևս 2001 թվականին ՊԻՄՄՆ-ն<sup>14</sup> առաջարկեց մի քանի կետեր, որոնցում, ըստ հանձնաժողովի անդամների, անգամ ընդունված համընդհանուր ցանկի բացակայության պայմաններում հստակորեն կարող են ամփոփվել պաշտպանելու պատասխանատվության իրականացման համար համապատասխան որոշումների կայացման սկզբունքները: Միջամտության իրականացման որևէ դեպքի լեգիտիմությունը, սկզբունքի իրավական հիմքերը, կիրառման խնդիրներն ու դրա կիրառման հիմքում ընկած քաղաքական բաղադրիչն ուսումնասիրելու տեսանկյունից նպատակահարմար է այդ կետերի ուսումնասիրությունը: Զեկույցում առանձնացվում են հետևյալ 6 սկզբունքները՝ արդար պատճառ, ճիշտ լիազորություն, ճիշտ մտադրություն, ծայրահեղ միջոց, համամասնական միջոցներ և ողջամիտ հեռանկարներ:

<sup>13</sup> Implementing The Responsibility to Protect, Report of The Secretary-General, UN General Assembly, 2009, pp. 8-9, <http://responsibilitytoprotect.org/implementing%20the%20top.pdf> (18.03.2018).

<sup>14</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ 32:



*Արդար պատճառ*: Ջեկույցի այս հատվածում անդրադարձ է կատարվում այն դեպքերին, երբ միջամտությունն արդարացված է: Ջեկույցի համաձայն մարդկանց պաշտպանության համար ռազմական միջամտությունը բացառիկ և արտասովոր միջոց է: Որպեսզի այն լինի երաշխավորված, պետք է լինեն մարդկանց հասցվող լուրջ և անուղղելի վնասների դրսևորումներ կամ դրանց լինելու անխուսափելի հավանականություն, մասնավորապես՝ մեծածավալ մարդկային կորուստներ՝ ցեղասպանության նպատակով կամ առանց դրա, էթնիկ գտում<sup>15</sup>:

Պրակտիկայի և դրա ակադեմիական վերլուծության հիման վրա մարդասիրական միջամտության պաշտպաններն առանձնացնում են երկու հիմնական չափանիշներ: Առաջինը ենթադրում է միջազգային խաղաղության և կայունության համար սպառնալիք ներկայացնող ներքին իրավիճակի առկայություն: Շատերի կարծիքով ներքին ճգնաժամի սրումը թույլ է տալիս այն դուրս բերել ներքին իրավասության շրջանակներից: Երկրորդ չափանիշը վերաբերում է մարդու իրավունքների կոպիտ խախտման և բնակչության զանգվածային և պարբերաբար տառապանքի փաստի առկայությունը<sup>16</sup>:

Ներկայումս գոյություն ունեն մի շարք ինստիտուտներ, որոնց խնդիրը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետությունների գործունեության ստուգումն է: Դրանք միջազգային կազմակերպություններ են, պետությունների կամ միջազգային կազմակերպությունների ստեղծած տարատեսակ կոմիտեներ ու հանձնաժողովներ, պետությունների դիվանագիտական առաքելություններ և տարբեր երկրներում հավատարմագրված միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ<sup>17</sup>: Թվում է, թե նման ինստիտուտների գործունեության պայմաններում առավել քան պարզեցված են որևէ պետությունում առկա իրավիճակի գնահատման և դրա հիման վրա պաշտպանելու պատասխանատվության իրականացման մեխանիզմները: Մինչդեռ պետք է արձանագրել, որ անգամ նման մեխանիզմների առկայության պայմաններում, երբ հնարավոր չէ ժխտել որևէ

<sup>15</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ XII:

<sup>16</sup> **Тарасова Л.**, К дискуссии о правомерности гуманитарной интервенции, Вестник Волгоградского государственного университета. *Юриспруденция*, **1**, 5(14), 2011, 99-105.

<sup>17</sup> **Яо Никэз А.**, նշվ. աշխ.:

պետությունում սեփական քաղաքացիների նկատմամբ իրականացվող բռնությունների, էթնիկ զտման, ընդհուպ միջև ցեղասպանության նպատակ հետապնդող դեպքերի առկայությունը, և երբ միջամտության իրականացման համար փաստացի գոյություն ունի հիմնավոր դրդապատճառ, պետությունները երբեմն ուղղակի աչք են փակում ստեղծված իրավիճակի վրա՝ չունենալով որևէ հետաքրքրություն տվյալ պետությունում կամ տարածաշրջանում: Ըստ էության, երբ միջամտությունն իրականացվում է սեփական շահի առկայության պայմաններում միայն, այն կորցնում է իր մարդասիրական բնույթը:

Ինչ վերաբերում է միջազգային խաղաղության և կայունության համար սպառնալիք ներկայացնող դեպքերին, ապա հարկ է անդրադառնալ, օրինակ, Իրաքում<sup>18</sup> իրականացված ռազմական միջամտությանը, որը չէր կրում մարդասիրական բնույթ: Հատկանշական է, որ ԱՄՆ իշխանությունները միջազգային հանրությանը ներկայացրին տեղեկություն՝ Իրաքում զանգվածային ոչնչացման զենքի մշակմամբ զբաղվելու մասին, որից հետո տարածաշրջանում ծավալվեցին ռազմական գործողություններ: Դրանց ավարտին միջազգային հանրությունը չճանաչեց նման սպառնալիքի առկայությունն այնտեղ<sup>19</sup>:

Այսպիսով, անկախ զեկույցում առաջ քաշված հիմքերից, որոնց առկայության պայմաններում արդարացված է պաշտպանելու պատասխանատվության սկզբունքը, որոշ պետություններ կարող են մարդու իրավունքների ռոնահարման և միջազգային խաղաղությանն ու կայունությանը սպառնացող իրավիճակի առկայությունն օգտագործել որպես պատրվակ՝ տարածաշրջանում իրականացնելով գործողություններ՝ սեփական շահերին հասնելու համար: Միաժամանակ, նման շահերի բացակայության դեպքում կարող է անտեսվել մարդասիրական միջամտության կարիք ունեցող երկրում գործողությունների իրականացման անհրաժեշտությունը:

*Ճիշտ մտադրություն:* Վերը նշված իրավիճակներից խուսափելու տեսանկյունից զեկույցում առանձնակի նշանակություն ունի «Ճիշտ

<sup>18</sup> Security Council Resolution № 1483, 2003, <https://www.iaea.org/sites/default/files/unsc1483.pdf> (15.03.2018).

<sup>19</sup> **Roth K.**, Was the Iraq War a Humanitarian Intervention?, *Journal of Military Ethics*, 5, 2, 2006, 84-92.

մտադրություն» սկզբունքը: Անկախ այն հանգամանքից, թե միջամտող պետություններն ինչ այլ շարժառիթներ ունեն, միջամտության առաջնային նպատակը պետք է լինի մարդկային տառապանքի դադարեցումը կամ կանխումը: Ճիշտ միջամտությունը լավագույնս կարող է ապահովվել բազմակողմանի գործողություններով՝ հիմնված տարածաշրջանային կարծիքների և տուժողների հետաքրքրությունների վրա<sup>20</sup>: Գոյություն ունի տեսակետ<sup>21</sup>, որի համաձայն միջամտությունը կարելի է համարել իրավական այն դեպքում, երբ դրա միակ նպատակը մարդու իրավունքների՝ հատկապես կյանքի իրավունքի լայնածավալ լուրջ խախտումների կանխումը կամ դադարեցումն է: Այդ նույն տեսակետի համաձայն մարդասիրական առաքելությունը պետք է չունենա քաղաքական դրդապատճառ: Մինչդեռ փորձը վկայում է, որ միշտ չէ, երբ միջամտող որևէ պետության բացարձակ նպատակը որևէ այլ պետության քաղաքացիների պաշտպանությունն է և անգամ նման իրավիճակում չի կարելի պնդել, որ միջամտությունն անօրինական է: Այս տեսանկյունից շատ կարևոր է տարբերել միջամտող կողմի նպատակն ու շարժառիթը:

Ըստ Ա. Բելամիի, պնդումը, թե մարդասիրական միջամտության միակ նպատակը օտարերկրացի քաղաքացիների ապահովության ու բարեկեցության երաշխավորումը կամ մարդասիրական աղետի կանխարգելումն է, չափազանց սահմանափակ է: Երբ հերթը հասնում է մարդասիրական միջամտությանը, շատ բան է պահանջվում, որպեսզի պետությունը վտանգի իր սեփական քաղաքացիների կյանքը՝ բացառապես փրկելու համար օտարների: Պետությունները չունեն օտարներին փրկելու պարտականություն, քանի որ առաջին հերթին նրանք պետք է մտահոգված լինեն սեփական քաղաքացիների բարեկեցությամբ և ապահովությամբ: Օրինական չի լինի վտանգել քաղաքացիների (անգամ՝ զինվորների) կյանքը մարդասիրական միջամտությամբ՝ օտարներին փրկելու համար<sup>22</sup>: Երբ որևէ պետություն կամ պետությունների խումբ կանգնած է պաշտպանելու

<sup>20</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ XII:

<sup>21</sup> **Тарасова Л.**, նշվ. աշխ.:

<sup>22</sup> **Bellamy A.**, Motives, outcomes, Intent and the Legitimacy of Humanitarian Intervention, *Journal of Military Ethics*, 3, 3, 2004, 216-232.

պատասխանատվության իրականացման խնդրի առաջ, շատ հավանական և բնական է, որ, բացի թիրախային երկրում համամարդկային արժեքների վերականգնման նպատակ ունենալուց, լինեն նաև այլ շարժառիթներ, որոնք կարող են դրդել պետությանը՝ ներդնել սեփական ռեսուրսները այլ պետության քաղաքացիների պաշտպանության համար: Մակայն սա դեռ չի նշանակում, որ միջամտությունը պետք է իրականացվի բացառապես շահի առկայության դեպքում: Բոլոր պետությունները, ստորագելով ՄԱԿ կանոնադրությունը, պարտավորվել են հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ուստի յուրաքանչյուրի գործունեության հիմքում նախ պետք է ընկած լինեն համամարդկային արժեքները: Ընդհանուր առմամբ, ցանկացած միջամտության իրականացման դեպքում նախ և առաջ կարևոր է գնահատել դրա արդյունքը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Եթե անգամ պաշտպանելու պատասխանատվությունն իրականացվում է պետական շահի հիման վրա, բայց և իսկապես հանգեցնում է նախապես հայտարարվող մարդասիրական նպատակին, կարելի է այն լեզվի միջոցով գնահատել: Որևէ միջամտող պետության շարժառիթ կարող է լինել սեփական սահմանների ամրապնդումը, այդ տարածաշրջանում սփյուռքի առկայության դեպքում վերջինիս պաշտպանությունը, տարածաշրջանում ազդեցություն ունենալը, տարածաշրջանային գործընթացներին մասնակցությունը, որևէ ռեժիմի տապալումը և այլն: Ուստի սխալ է պաշտպանելու պատասխանատվության լեզվի միջոցով գնահատելիս հիմնվել բացառապես շարժառիթի վրա: Ա. Բելամին համարում է, որ նպատակների վրա կենտրոնացումը շատ կարևոր է, քանզի այն միջամտողի մտադրությունն է: Շարժառիթը վատ ցուցանիշ է միջամտության լեզվի միջոցով գնահատելու համար, բայց շարժառիթն անհրաժեշտ չէ հավասարեցնել նպատակի հետ<sup>23</sup>: Նպատակի վրա կենտրոնացումը բարոյական վերլուծության հնարավորություն է տալիս, որը միավորում է շարժառիթներն ու արդյունքները: Նպատակները շարժառիթների արդյունքներն են և արդյունքները

<sup>23</sup> Նույն տեղում:

ձևավորվում են այն ռազմավարությամբ, որն ընդունվել է նպատակներին հասնելու համար<sup>24</sup>:

*Օայրահեղ միջոց*. Զեկույցի համաձայն, ռազմական միջամտությունը կարող է արդարացված լինել միայն այն դեպքում, երբ ճգնաժամի կանխարգելման կամ խաղաղ լուծման համար յուրաքանչյուր ոչ ռազմական տարբերակ ուսումնասիրվել է և համարվել ոչ բավարար<sup>25</sup>: Մակայն դա չի նշանակում, որ յուրաքանչյուր նման տարբերակ պետք է փորձարկվի, այլ անհրաժեշտ են խելամիտ հիմնավորումներ՝ հավաստիանալու համար, որ բոլոր դեպքերում, եթե միջոցները կիրառվեին, չէին հաջողելու<sup>26</sup>: Եվ իսկապես, պայմանավորված այն հանգամանքով, որ որոշ դեպքերում ռազմական միջամտության ձգձգումը կարող է հանգեցնել ավելի մեծ մարդասիրական աղետի, ավելի շատ զոհերի ու կորուստների թիրախային երկրում, անհրաժեշտ է ձեռնարկել կտրուկ գործողություններ: Մինչդեռ, մյուս կողմից, այս մոտեցումը կարող է քաղաքական մանևրումների հնարավորություն ստեղծել: Մասնավորապես, տեսականորեն հնարավոր է, որ տարածաշրջանում շահեր հետապնդող պետություններն՝ այլ միջոցների անարդյունավետ լինելու պատճառաբանությամբ, դրսևորեն շտապողականություն՝ առանց հնարավոր արդյունավետ տարբերակների փորձարկման: Այս տարբերակը հնարավոր է նաև իրավիճակի ոչ ճիշտ գնահատման դեպքում:

Ռազմական միջամտությունը կարող է հանգեցնել մեկ այլ խնդրի ևս: Երբեմն մարդասիրական նպատակներով իրականացվող միջամտությունից կարող է տուժել նաև խաղաղ բնակչությունը: Արդյունքում ստացվում է, որ մի կողմից ձեռնարկվում են քայլեր՝ թիրախային երկրի բնակչության անվտանգության ապահովման համար, իսկ մյուս կողմից, զինված բնակչությունից բացի, նույն գործողությանը զոհ են գնում նաև անմեղ քաղաքացիներ: Այս դեպքում առաջանում է տրամաբանական հարց՝ որքանո՞վ էր միջամտությունը մարդասիրական, նպատակահարմար և արդյունավետ:

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ XII:

<sup>26</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ 36:

*Համաչափ միջոցներ:* Ծրագրված ռազմական միջամտության մասշտաբը, տևողությունն ու ինտենսիվությունը պետք է լինի նվազագույնը, որն անհրաժեշտ է մարդկանց պաշտպանության սահմանված նպատակի համար<sup>27</sup>: Ըստ էության, այս սկզբունքը պայմաններ է ստեղծում, որպեսզի պաշտպանելու պատասխանատվությունն իրականացնող պետություններն այն չվերածեն սեփական շահի հասնելու միջոցի և մարդասիրական գործողությունները դուրս չգան սահմաններից: Ռազմական միջամտության իրականացումն, այս դեպքում, ենթադրում է գործողությունների այնպիսի շրջանակի, իրականացման ծավալի և մեթոդների սահմանում, որոնք բավարար կլինեն մարդասիրական նպատակին և միջազգային խաղաղության հասնելու համար և մարդասիրական նպատակներ հետապնդող ռազմական գործողությունները չեն վերածվի պատերազմական գործողությունների, ինչն իր հերթին կարող է հանգեցնել ավելի մեծ ու լայնածավալ մարդասիրական աղետի: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել Եմենի, Պակիստանի և Մոմալիի տարածքում 2002 թվականից ահաբեկչության դեմ սկսված պայքարը, երբ ԱՄՆ կառավարությունը սկսեց օդային հարվածներ հասցնել: 2008 թվականին այս գործողություններն այնքան ակտիվացան, որ արժանացան ՄԱԿ պաշտոնյաների քննադատությանը, քանի որ նման ինտենսիվ հարվածները վտանգում էին նաև խաղաղ քաղաքացիներին: Այսպիսով, եթե պետությունները վերը նշված սկզբունքների շրջանակում կարող են մանևրել իրենց գործողություններում, ապա այս դեպքում ոչ մարդասիրական նպատակները քողարկել հնարավոր չէ, ուստի առավել դյուրին է գնահատել գործողությունների լեգիտիմությունը:

*Ողջամիտ հետանկարներ:* Տառապանքների դադարեցման և կանխարգելման հաջողության համար պետք է լինի խելամիտ հնարավորություն, երբ գործողության հետևանքը չի կարող լինել ավելի վատ, քան անգործության հետևանքը<sup>28</sup>: Այսինքն, առանցքային կարևորություն ունի ստեղծված վիճակի ուսումնասիրությունը, գնահատումը, որպեսզի գործողությունների արդյունքում գրանցվի

<sup>27</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ 37:

<sup>28</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ XII:

դրական տեղաշարժ ու պաշտպանելու պատասխանատվությունը լինի արդարացված, այլ ոչ թե առավել սրվի իրավիճակը թիրախային երկրում՝ հանգեցնելով ավելի վատ արդյունքի, քան մինչև միջամտության իրականացումն էր: Նման դեպքերի շարքին կարելի է դասել Դարֆուրի օրինակը, որտեղ պաշտպանելու պատասխանատվության ուշ իրականացումն էլ ավելի սրեց իրավիճակը: Միջազգային պրակտիկայում գրանցվել են նաև դեպքեր, երբ մարդասիրական միջամտությունը չի համապատասխանել նախապես հայտարարված նպատակներին ու էլ ավելի է անկայունացրել իրավիճակը:

*Ճիշտ լիազորություն:* Պաշտպանելու պատասխանատվության իրականացման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, թե ով է լիազորված այն իրականացնել: Հեղինակների մեծ մասը համաձայն է այն կարծիքի հետ, որ մարդասիրական միջամտության իրականացումը նախընտրելի է ոչ թե պետությունների, այլ համընդհանուր և տարածաշրջանային բնույթի միջազգային կազմակերպությունների կողմից: Տ. Բորդաչևն ընդգծում է, որ ուժի հնարավոր կիրառման հետ կապված գործողություններն ավելի խելամիտ է վստահել կազմակերպություններին, որոնք ավելի ունակ են նմանատիպ գործունեության, և, ըստ այդմ, տիրապետում են անհրաժեշտ ռեսուրսների և հմտությունների: Որոշ հետազոտողներ միջազգային կազմակերպությունների միջամտությունը համարում են ոչ միայն ավելի խելամիտ, այլև միակ օրինականը, իսկ պետությունը, նրանց կարծիքով, նման միջամտության իրավունք չունի<sup>29</sup>:

ՄԱԿ Անվտանգության Խորհուրդը, լիազորված լինելով հանդես գալ որպես միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման հիմնական պատասխանատու, ՄԱԿ Կանոնադրության 39-42 հոդվածներով<sup>30</sup> իրավասու է որոշել, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման կամ վերականգնման համար: Միջազգային անվտանգությանը սպառնացող իրավիճակում ԱԽ-ն լիազորված է նախ

<sup>29</sup> **Бордачев Т.**, «Новый интервенционизм» и современное миротворчество, М., 1998, **Brownlie J.**, International Law And The Use of Force by States, Oxford, 1963 (ըստ **Тарасова Л.**, նշվ. աշխ.):

<sup>30</sup> ՄԱԿ-ի կանոնադրություն,  
[http://www.un.org/ru/ua/1.%20UN%20Charter\\_arm.pdf](http://www.un.org/ru/ua/1.%20UN%20Charter_arm.pdf)

պահանջել շահագրգիռ կողմերից կատարել ժամանակավոր միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում կարող է վճռել, թե զինված ուժից բացի ինչ միջոցների պետք է դիմել իր որոշումներն իրականացնելու համար, իսկ դրանց անբավարար լինելու դեպքում կարող է ձեռնարկել այլ, մասնավորապես՝ օդային, ծովային կամ ցամաքային զինուժի ցուցադրություններ և այլ գործողություններ՝ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը վերականգնելու նպատակով:

Մարդասիրական միջամտության իրականացման տեսանկյունից չկա մարդու իրավունքների պաշտպանության համար ռազմական միջամտությունը թույլատրող ավելի լավ և համապատասխան մարմին, քան ԱԽ-ն է<sup>31</sup>: Միայն Անվտանգության Խորհուրդն իրավունք ունի որոշել՝ արդյոք որևէ երկրի սահմաններում տեղի ունեցող մարդու իրավունքների մեծ խախտումները սպառնալիք են ներկայացնում խաղաղության համար և միայն այդ մարմինն է լիազորված հարկադիր ուժով վերջ տալ օրինախախտումներին: ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա Անվտանգության Խորհուրդը տիրապետում է հարկադիր միջոցների զարգացած համակարգի՝ տնտեսական ազդեցությունից մինչև ռազմական ուժի օգտագործում, որոնք գործում են միջազգային կարգի և մարդու իրավունքների պաշտպանության համար<sup>32</sup>:

Անվտանգության Խորհրդի 5 մշտական անդամները պետք է համաձայնեն չկիրառել իրենց վետոյի իրավունքն այն դեպքում, երբ չունեն պետական շահ՝ այդպիսով չխոչընդոտելով մարդկանց պաշտպանության նպատակով ռազմական միջամտությունը թույլատրող բանաձևերի ընդունմանը, երբ մյուս կողմից կա մեծամասնության աջակցություն<sup>33</sup>:

Եթե Անվտանգության Խորհուրդը մերժում է առաջարկը կամ ձախողում է այն ողջամիտ ժամանակահատվածում, որպես այլընտրանք կարող է լինել<sup>34</sup>:

<sup>31</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ XII:

<sup>32</sup> **Тарасова Л.**, նշվ. աշխ.:

<sup>33</sup> The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ XIII:

<sup>34</sup> Նույն տեղում:



1. Գլխավոր Ասամբլեայի կողմից արտակարգ հատուկ նիստում հարցի քննարկումը՝ «միավորում՝ հանուն խաղաղության» բանաձևի շրջանակներում;
2. Անվտանգության Խորհրդի կողմից հետագա թույլտվություն պահանջող գործողությունների իրականացումը՝ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային կազմակերպությունների իրավասությունների շրջանակում:

Այսպիսով, պաշտպանելու պատասխանատվության սկզբունքի կիրառման համար լեգիտիմ հիմքեր ստեղծելու նպատակով անհրաժեշտ է հիմնվել վերոնշյալ 6 սկզբունքների վրա: Բայց և այդ պարագայում ամբողջությամբ չի հաջողվում կարգավորել խնդրի շուրջ մոտեցումների տարածայնությունները: Մոտեցումներից մեկի համաձայն, պաշտպանելու պատասխանատվության սկզբունքի ձևավորումը՝ շեշտադրումը միջամտության «իրավունքից» պետության «պատասխանատվություն» տեղափոխելով, պայմանավորված է ԱԽ միջոցով միջազգային հանրության միջամտելու իրավունքի մեղմացման և լեգիտիմացման փորձով, մինչդեռ, ըստ էության, այն շատ քիչ է տարբերվում մարդասիրական միջամտության հայեցակարգի համատեքստում եղած միջամտությունից<sup>35</sup>:

### **Պետության պատասխանատվություն, թե՞ ինքնիշխանություն**

Պաշտպանելու պատասխանատվության իրականացման շուրջ քննարկումները, հատկապես երբ խնդիրը վերաբերում է դրա լիազորությունն ունեցող մարմնին, երբեք չեն շրջանցում Կոսովոյում ՆԱՏՕ-ի կողմից իրականացված գործողությունների թեման, քանի որ, ըստ էության, այն լիազորված չէր ՄԱԿ ԱԽ-ի կողմից: Կոսովոյում ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունը որակվեց ոչ լեգալ, բայց լեգիտիմ<sup>36</sup>: Ըստ այդմ, այն ոչ լեգալ էր, քանի որ նախապես ԱԽ կողմից

<sup>35</sup> Ясносокирский Ю., Принцип невмешательства и ответственность по защите (ОПЗ), *Matters of Russian and International Law*, 3, 2013, 9-22.

<sup>36</sup>The Kosovo Report, The Independent International Commission On Kosovo, New York, 2000, p. 4, <https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/6D26FF88119644CFC1256989005CD392-thekosovoreport.pdf> (18.03.2018).

չէր արտոնվել: Իսկ լեզիտիմ էր, քանի որ սպառվել էին ինդրի կարգավորման բոլոր դիվանագիտական միջոցները, միջամտության արդյունքում Կոսովոյի բնակչության մեծամասնությունն ազատագրվեց Սերբիայի իշխանության երկարատև ճնշումներից: ՄԱԿ ԱԽ գլխավոր քարտուղարը 2012 թվականի զեկույցում ընդգծել է, որ յուրաքանչյուր իրավիճակ ունի իր առանձնահատկություններն, ուստի պաշտպանելու պատասխանատվությունը պետք է իրականացվի հնարավորինս հետևողական և համաչափ: Յուրաքանչյուր իրավիճակում մեթոդների և մեխանիզմների ընտրությունը պետք է հիմնվի տեղի պայմանների և հնարավոր հետևանքների մանրամասն, կշռադատված վերլուծության վրա: Եվ նման տարբերություններն էլ հանգեցնում են երկակի ստանդարտների կիրառման և ընտրողական մոտեցման մեղադրանքի<sup>37</sup>: ՆԱՏՕ-ի գործողությունների ուսումնասիրության ժամանակ պետք չէ անտեսել նաև այն հանգամանքը, որ պաշտպանելու պատասխանատվության հայեցակարգը միջազգային իրավունքի նորմի կարգավիճակ չունի, ուստի դրա միակողմանի կիրառումն՝ առանց ԱԽ բանաձևի, կլինի ՄԱԿ կանոնադրության դրույթների խախտում<sup>38</sup>:

Ընդհանուր առմամբ, պաշտպանելու պատասխանատվության իրականացման լեզիտիմության վերաբերյալ քննարկումները մշտապես կապվում են պետությունների ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների հետ: Պաշտպանելու պատասխանատվության սկզբունքն, ըստ էության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի առկայության պայմաններում մարդասիրական միջամտության իրականացման համար իրավական հիմնավորման փորձ է՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության տեսանկյունից:

Միջամտության քաղաքականության կողմնակիցներն այն կարծիքին են, որ մարդու իրավունքներն ու միջազգային անվտանգությունն ինքնիշխանությունից թանկ են: Այս բավականին խոցելի

<sup>37</sup> Responsibility to protect: Timely and Decisive Response, Report of the Secretary-General, UN General Assembly, 2012, p. 6, [http://www.responsibilitytoprotect.org/UNSG%20Report\\_timely%20and%20decisive%20response\(1\).pdf](http://www.responsibilitytoprotect.org/UNSG%20Report_timely%20and%20decisive%20response(1).pdf) (18.03.2018).

<sup>38</sup> Худайкулова А., նշվ. աշխ.:

մոտեցման համաձայն, որպես մարդասիրական միջամտության օբյեկտ հանդես է գալիս ոչ թե պետությունն, այլ մի տարածաշրջանի բնակչություն, որտեղ միջամտության պահին փաստացիորեն չեն գործում պետական ինստիտուտները, որոնք այլևս չեն կարող որակվել որպես ինքնիշխանության կրող<sup>39</sup>: Միջազգային իրավունքը չի կարգավորում պետության ներքին իրավասությունը, քանի որ այն պայմանավորված է պետության ինքնիշխանությամբ և որոշվում է պետության գործողությամբ: Այդ պատճառով միջամտություն պետք է դիտարկվի պետությունների կամ միջազգային կազմակերպությունների ցանկացած գործողություն, որի օգնությամբ վերջինները փորձում են խոչընդոտել միջազգային իրավունքի սուբյեկտին՝ լուծելու իր իրավասությունների մեջ մտնող հարցերը: Ներքին չեն համարվում այն հարցերը, որոնք իրենց էությամբ և ուղղվածությամբ վտանգ են ներկայացնում խաղաղությանն ու անվտանգությանը, կոպտորեն ոտնահարում են համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային նորմերը<sup>40</sup>: Մինչդեռ այն դեպքում, երբ պետությունը լիարժեք կատարում է իր պաշտպանելու պատասխանատվությունը, միջազգային հանրությունից չի պահանջվում իրականացնել կոլեկտիվ միջոցներ բնակչության պաշտպանության համար<sup>41</sup>:

### Եզրակացություն

Գլոբալացմամբ պայմանավորված՝ միջպետական հարաբերությունների բնույթի փոփոխությունը հանգեցրել է միջազգային համագործակցության առավել սերտացման, ինչի արդյունքում աշխարհի որևէ հատվածում ընդունված քաղաքական որոշումները, կատարվող իրադարձություններն ու իրականացվող գործողություններն անդրադառնում են մնացած հատվածի վրա: Քանի որ գլոբալացումը ենթադրում է նաև ընդհանուր անվտանգության ապահովում, դրան հնարավոր չէ հասնել միայն ազգային քաղաքա-

<sup>39</sup> Լույն տեղում:

<sup>40</sup> **Сазонова К.**, Концепция «ответственность за защиту» в миротворческой деятельности Организации Объединенных Наций, *Юридическая наука*, 1, 2012, 96-100.

<sup>41</sup> Responsibility to protect: Timely and Decisive Response, նշվ. աշխ., էջ 5:

կանությամբ: Ուստի միջազգային անվտանգության ապահովման ոլորտում պետությունների համագործակցությունը հանգեցրել է միջազգային իրավունքի ընդլայնման: «Մարդասիրական միջամտություն», «պաշտպանելու պատասխանատվություն» հասկացությունների իրավական հիմքերի, քաղաքական բաղադրիչի, կիրառման խնդիրների, պետության ինքնիշխանության վրա նմանատիպ միջամտության հնարավոր ազդեցության ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել.

1. Մարդասիրական միջամտության իրականացման իրավական հիմքում մարդու իրավունքերի ու ազատությունների պաշտպանությունն է: Պայմանավորված այն հանգամանքով, որ գոյություն ունեցող նորմերի շրջանակում ՄԱԿ անդամ պետությունները պարտավորվում են հարգել այդ իրավունքներն ու ազատությունները, յուրաքանչյուր գործողություն պետք է ուղղված լինի դրանց պաշտպանությանն ու ամրապնդմանը՝ չշրջանցելով միջազգային իրավունքը: Մարդասիրական միջամտությունը նմանատիպ գործողությունների դրսևորումներից է:
2. Միջազգային հանրության կողմից պաշտպանելու պատասխանատվության իրականացումը չի հակասում պետության ինքնիշխանության սկզբունքին: Որևէ պետության տարածքում մարդու իրավունքների ոտնահարման, քաղաքացիների հանդեպ բռնության կիրառման պայմաններում միջազգային հանրության կողմից պաշտպանելու պատասխանատվության ստանձնումը չի կարող դիտարկվել որպես տվյալ պետության ինքնիշխանության ոտնահարում, երբ վերջինս չի կարողանում կամ չի ցանկանում կատարել իր պատասխանատվությունը սեփական բնակչության առաջ: Ինքնիշխանություն հասկացությունը սեփական բնակչության առաջ նախ որպես պետության պարտականություն ու պատասխանատվություն դիտարկելն իրավական հիմքեր է ստեղծում միջազգային հանրության համար՝ ոտնահարվող իրավունքները պաշտպանելուն ուղղված իր պարտականությունների կատարման նպատակով:

3. Միջազգային իրավունքի տեսանկյունից պաշտպանելու պատասխանատվության և պետությունների ներքին իրավասության հարցերին չմիջամտելու սկզբունքների միջև չկա հակասություն: Երբ պետությունը չի իրականացնում իր՝ մարդու իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը, վտանգված են մարդու իրավունքներն ու ազատությունները կամ ստեղծված իրավիճակը կարող է հանգեցնել մարդասիրական աղետի, չմիջամտելու սկզբունքն իր տեղը զիջում է պաշտպանելու պատասխանատվությանը:
4. Որևէ գործողության լեգիտիմության և լեգալության որոշման գործընթացի բարդությունը պայմանավորված է անհրաժեշտ մեխանիզմների՝ մարդասիրական միջամտության իրականացման համար հստակ կանոնների, ընթացակարգերի և սկզբունքների բացակայությամբ, ինչն ազդեցիկ երկրներին տարատեսակ քաղաքական մանևրումների հնարավորություն է ընձեռում:
5. Չնայած Պետական ինքնիշխանության և միջամտության հարցերով միջազգային հանձնաժողովի առաջարկած սկզբունքների ներմուծումը հնարավորինս պարզեցնում է պաշտպանելու պատասխանատվության իրականացման մեխանիզմը, փորձը ցույց է տալիս, որ այն բավարար չէ պաշտպանելու պատասխանատվության գործողությունները բացառապես մարդասիրական գործողությունների շրջանակում սահմանափակելու համար և որ կիրառման խնդիրները պայմանավորված են ոչ լիարժեք իրավական նորմերի առկայությամբ:

---

## **Humanitarian Intervention: Legal Bases and Problems of Application**

LILIT MURADYAN

*Yerevan Brusov State University of Languages and Social Sciences*

The concept of humanitarian intervention, which is a subject of active debates and discussions, has become widely used in international law along with the principles of respect for human rights, non-use of force and threat of force, non-interference in the internal affairs of states and the sovereign equality of all states fixed by UN Charter. Over time, the discussions and disagreements on the concept created conditions for the formation of a new concept - "Responsibility to protect" (R2P) in international relations. With the new approach, state sovereignty ceased to be perceived as a privilege. First of all, it began to be interpreted as a responsibility of a state and only in the case of its failure the international community is entitled to implement the R2P. However, the replacement of the old concept with a new one couldn't circumvent the differences and disagreements of the approaches of the principle's implementation legitimacy and problems of its application in international practice. The legal bases and the problems of application of humanitarian intervention and the R2P in international relations, as well as the criteria, their peculiarities and disadvantages, set by the International Commission on Intervention and State Sovereignty (ICISS) for the implementation of the R2P, are observed in the article.